Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

С 3/4 А

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ՝
ՑԵՂԻ՛Ր ՊԱՏՐԱՍՏ

ՄԱՆԿ. ԿՈՄ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆԴՐԲՅՈՒՐՈ

Համ. ԼԿՅԵՄ Ա.Ենդրյերկոմին կից

ՊԻՈՆԵՐ՝ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱՐՁՈՒՆՔ-ՆԵՐԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ՆԵՄԱԿՆԵՐ
ՎԱՐՈՂՈՒՄՆԵՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЯЗЫКОЗНАНИЯ
Академии Наук
СССР

ЗКЮП
П-62

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
„ԷԼԼԻՆԱՁՐԴԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԻ"
ԹԻՖԼԻՍ 1931 Թ.

Թիֆլիս, տպարան լրագրների հրատարակչության «Կոլեկտիվ»
Գլավլիտ № 1108. Տիրաժ № 3000.
Պատվեր № 1393.

ЗКНОП
Ф-62
24 SEP 2006
1 DEC 2009

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴՈՐԾԻ ՊԱՏԶԵՐԻՆ ՑԵՂԻՐ ՊԱՏՐԱՍՏ:

ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖՐՈՆՏԸ՝ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՖՐՈՆՏՆ Է

ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖՐՈՆՏԻ ՀԱՄԱՐ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՑԵՆԹԵՐԿԵՆՔ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԲԱՏԵԼԻՈՆՆԵՐԸ

«Մեր առջև ամրոց է կանգնած, այդ ամրոցը կոչվում է գիտություն, իր բազմաթիվ գիտելիքների ճյուղերով։ Ինչ ել վոր լինի, մենք ամրոցը պետք է վերցնենք։ Այդ ամրոցը պետք է վերցնի յերիտասարդությունը, յեթե ուզում է լինել նոր կյանքի կառուցող, յեթե նա ուզում է դառնալ հին գվարդիայի իսկական փոխարինողը»։ (Ստալին)։

ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐԲՈՐԴ ՏԱՐՈՒՄ ՎԱՃՌՈՒՄ Է ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՄԲՈՂՋ ՖՐՈՆՏՈՎ

Հնգամյակն ըստ արդյունաբերության հիմնական ճյուղերի կատարել յերեք տարում։

Սոցիալիստական ինդուստրիայի շրջանում դնել նոր 500 ձեռնարկություններ։

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

22 JUL 2013
11016

Կոլեկտիվացնել բոլոր գյուղացիական տնտեսությունների առնվազն 50%, իսկ հացահատիկային շրջաններում՝ առնված 80%, և գյուղատնտեսությանը տալ մեքենայական բազա։

ԱՀԱ ԹԵ ԻՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐԻՑ։ ԱՀԱ ԹԵ ԻՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՋԱՆԻՑ

ԼՍԵՑԵ՛Ք ՊԻՈՆԵՐՆԵՐ
ԼՍԵՑԵ՛Ք ՑԵՐԵԽԱՆԵՐ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐԻ

«Մենք պետք է առաջ անցնենք այնպես վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը, նայելով մեզ, կարողանա ասել. ահա տեսնք իմ առաջավոր ջոկատը, ահա տեսնք իմ հարվածային բրիգադը, ահա թե ինչ է բանվորական իշխանությունը, ահա տեսնք իմ բանվորական հայրենիքը, նրանք իրենց գործն են անում, մեր գործը լավ է, ոգնենք նրանց՝ կապիտալիստների դեմ և տարածենք համաշխարհային հեղափոխության գործը»։ (Ստալին)։

Ահա թե ինչի համար ենք կռվում և կկռվենք հնգամյակի յերրորդ վճռական տարում։

ԼՍԵՑԵ՛Ք ՊԻՈՆԵՐՆԵՐ, ԼՍԵՑԵ՛Ք ՅԵՐԵԽԱՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐԻ

Բոլշևիկյան յերկաթե ավանդարդի ղեկավարությամբ բանվոր դասակարգը անչափ հաղթանակներ է

ՀՍՍՌ-Արտ ՀՍՊ
61956-67

տարել սոցիալիզմի համար մղվող պայքարի բոլոր ճակատներում։

Լենինյան հարցը՝ «ով-ում»—կապիտալիզմն է հաղթելու մեզ, թե մենք կհաղթենք կապիտալիզմին, արդյունաբերության ընդգավառում Լենինյան ձևով լուծվածե սոցիալիզմի ոգտին վերջնականապես և անվերադարձ։

Լենինյան հարցը՝ «ով-ում», կապիտալիզմն է հաղթելու մեզ, թե՞ մենք կհաղթենք կապիտալիզմին, լենինյան ձևով և նույնպիսի աջողությամբ և անվերադարձ կերպով լուծվում է գյուղատնտեսության ընդգավառում։

Հնգամյակի յերրորդ վճռական տարվա ծրագիրը, վորն ավարտելով մենք կավարտենք նայել ԽՍՀՄ սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը, պահանջում է ել ավելի բարձրացնել պայքարի տեմպերը, Խորհրդային Միության բանվոր դասակարգի յեվ աշխատավոր մասսաների ել ավելի մեծ հեղափոխական վերելքը։

Այդ է պահանջում մեզանից համաշխարհային հեղափոխությունը։

Լսեցնք պիոներներ, լսեցնք խորհրդների յերկրի յերեխաներ, հնգամյակի պատանի ճակատայիններ, լսեցնք։

Խոսում է կուսակցությունը.

«Չկան այնպիսի ամրոցներ, վոր բոլշևիկները չկարողանան վերցնել։ Մենք լուծեցինք մի շարք դժվարագույն խնդիրներ։ Մենք տապալեցինք կապիտալիզմը։ Մենք վերցրինք իշխանությունը։ Մենք կառուցեցինք ամենախոշոր սոցիալիստական ինդուստրիան։ Մենք միջակին դրինք սոցիալիզմի ուղու վրա։ Շինարարության տեսակետից ամենակարևորը

մենք արդեն հաղթահարել ենք։ Անելու մեզ քիչ է մնում. ուսումնասիրել տեխնիկան, տիրապետել գիտությանը։ Եվ յերբ մենք կհաղթահարենք այդ, մեզ մոտ կսկսվեն այնպիսի տեմպեր, վորոնց մասին մենք չենք եղ համաձարկվում յերազել»։

Կուսակցությունը բանվոր դասակարգի առջև դրել է գլխավոր խնդիրը՝ տիրապետել տեխնիկային։ Կոմյերիմիությունն այսոր մոբիլիզացիայի ի յենթարկում սոցիալիստական տեխնիկայի յերիտասարդ բանակները։

Վորովհետև

«Վերակառուցման ժամանակաշրջանում տեխնիկան և վճռում ամեն ինչ»։

Պատանի պիոներներ, խորհրդային Ցերկրի յերեխաներ։

Ո՞ւմ է պարտավորեցնում այսոր կուսակցության կոչը, յեթե վոչ մեզ՝ լծվելու տեխնիկական գիտելիքները յուրացնելու համար մղվող արշավին։

Ո՞վ պետք է ամբողջ հոգով և պիոներական համառությամբ արձագանքի կուսակցության մարտական կոչին, յեթե վոչ մենք, սոցիալիստական տնտեսության վաղվա կադրերը։

Տեխնիկայի Ֆրոնտը՝ դասակարգային պայքարի Ֆրոնտն է։

Տիրապետել տեխնիկային՝ դա նշանակում է հընաթավորություն չտալ նոր Ռամզիններին, նոր Կոնդրատյեվներին, Ջասատարների նոր խմբերին՝ խանգարելու մեզ, մեր հակայական խնդրի—հասցնելու և անցնելու—լուծմանը։

Տիրապետել տեխնիկային՝ դա նշանակում է ուժեղացնել սոցիալիստական շինարարության տեմպերը։

Տիրապետել տեխնիկային՝ դա նշանակում է՝ «հասնել և անցնել», դա նշանակում է հաղթել։

Պատանի պիոներներ, խորհրդային յերկրի յերեխաներ։

Առանց մի բոպե դանդաղելու, կուսակցության և կոմյերիմիության հետևից, զինված կոմյերիմիության IX համագումարի վորոշումներով, բանվոր դասակարգի հետ միասին՝ դեպի պայքար տեխնիկայի բարձունքները տիրապետելու համար։ Տեխնիկայի համար պայքարող կոմյերիմիության արշավին մենք պետք է լծենք պիոներական բատալիոնները, խորհրդային յերկրի յերեխաների բատալիոնները։

Ոգնենք բանվորին տիրապետելու տեխնիկային

Մանկական Կոմունիստական Կազմակերպությունների (ՄԿԿ) Կենտրոնական Բյուրոն կոչ է անում պիոներական ամեն մի ջոկատի և դպրոցի՝ ոգնել կուսակցությանը և կոմյերիմիությանը շարժման մեջ դնելու միլիոնավոր բանվորների, կոլխոզնիկների և յերիտասարդների՝ սոցիալիստական արտադրության տեխնիկային տիրապետելու համար։

Ձեր ուժերով, կոմյերիտների հետ միասին, ընկ. Ստալինի ճառը կարդացեք ամեն մի բանվորի, ընտանիքում ձեր հորը և մորը, պատմեցեք նրանց, թե ինչպես են կատարելու «յերեսներս դեպի տեխնիկան» խնդիրը։ Ձեր բանվոր ծնողներին ընդունել տվեք տեխնիկայի բրիգադներում, վորոնք կազմվում են Ստալինի անունով։ Աշխատեցեք, վոր հարվածայինները կոնկրետ պարտավորությունները ընդունեն իրենց վրա տեխնիկային տիրապետելու համար, ներգրավեցեք բանվորներին արտադրություն ուսումնասիրող խմբակների մեջ։ Սոցիալիստական մրցակցության վե-

բաբերյալ ցեխերի, բանվորների և ծնողների հետ կնքվող պայմանագրերի մեջ մտցրեք պարտավորություններ տեխնիկայի ուսումնասիրության վերաբերյալ։ Ոգնեցեք կոմյերիմիությանը կազմակերպելու տեխնիկական-դյուտարարական սենյակներ և արտադրական ցուցահանդեսներ բանվորական ակումբներում։ Մոբիլիզացիայի յենթարկեցեք գրավաճառներին տեխնիկական գիրքը բանվորական մասսաների մեջ տանելու համար։ Կազմակերպելով այդ աշխատանքը, դուք կոգնեք արդֆինպլանը կատարելուն և գերակատարելուն։

Ավելի՛ մոտենանք արտադրության տեխնիկային

Կուսակցության մարտական կոչը հանուն գիտության և տեխնիկայի բարձունքների տիրապետման՝ պարտավորեցնում է պիոներկազմակերպությանը՝ արդֆինպլանի համար մղվող պայքարում ավելի խորը մասնակցելու նաև այնպիսի ասպարեզներում, վորոնք բարձրացնում են արտադրության տեխնիկան։

Դա նշանակում է ավելի ամուր կապվել արտադրության կյանքի հետ, իմանալ արտադրության ամբողջ կյանքը, իմանալ բոլոր անկանոնությունների պատճառը, խորն ուսումնասիրել յուրաքանչյուր դաղդյահի աշխատանքը և զինվելով արտադրության գիտելիքներով՝ լծվել արտադրության աշխատանքին, ավելի լավ պայքարել այդ անկանոնությունները վերացնելու համար։

Դա նշանակում է՝

Ոգնել կուսակցությանը և կոմյերիմիությունը ե՛լ ավելի լայնացնելու սոցմրցումը և հարվածայնությունը, մոբիլիզացիայի յենթարկելու ձեռնարկության բոլոր հնարավորությունները՝ արդֆինպլանի

թե քանակական և թե վորակական ցուցանիշները կատարելու համար։

Ոգնել մղվող պայքարում՝ հանուն արտադրության ռացիոնալացման, հանուն լայն ռացիոնալիզատորական և դյուտարարական շարժման զարգացման, բանվորի ամեն մի շահեկան առաջարկությունը շուտափույթ կերպով իրագործելու համար։

Ոգնել մղվող պայքարում հանուն վառելիքի և ելեքտրո-եներգիայի ամենախիստ խնայողության, հումքի վատնման դեմ մղվող պայքարում, հանուն հումքի ռացիոնալ ոգտագործման, հանուն գունավոր մետաղների խնայողության, դեֆիցիտային հումքի փոխարինման ձևերը գտնելու համար (գունավոր մետաղների փոխարեն՝ սև և այլն)։

Ոգնել արտադրության կորուստների դեմ մղվող պայքարում, մեքենաների սարքավորումը լիովին ոգտագործելու համար, աշխատանքային օրը լիովին բեռնավորելու համար, բրակը վճռականապես իջեցնելու համար, արտադրության մնացորդները ռացիոնալ կերպով ոգտագործելու համար։

Ոգնել քարածխային արդյունաբերությունն ուժեղացնելու համար մղվող պայքարում, հանուն քարածխի ստացման մեխանիզացիան անշեղ անցկացնելու գործի, հանուն կոնվեյերի, վրուբովկի և մուրճի անդադար աշխատանքի, հանուն նորագույն մեխանիզմների ուսումնասիրության։

Ոգնել մղվող պայքարում՝ մետալուրգիայի հումքի վորակի համար, հանածոյի անպետք խառնուրդը ջոկելու համար, արտադրության ռացիոնալացման համար, դոմնայի և մարտինի հնոցները լիովին բեռնավորելու և անընդհատ աշխատեցնելու և մետաղի ջար-

դի վերադարձը մեծալուրգիային ուժեղացնելու համար։

Ոգնել ելեկտրիֆիկացիայի շեֆ՝ կոմսերիտմիությանը ձեռնարկության եներգո-տնտեսությունը ավելի լավ կազմակերպելու, արտադրության մեջ ելեքտրո-եներգիայի կիրառման նոր ձևերի համար, արդյունաբերության և գյուղատնտեսության համար ելեքտրաշարժարանների կողմից ժամանակին կատարելու համար մղվող պայքարում։

Ոգնել յերկաթուղային տրանսպորտը բարձրացնելու համար, շոգեշարժների նորոգման վորակի համար, դեպոյի և նորոգման արհեստանոցների աշխատանքի ռացիոնալացման համար, բեռնավորման և բեռնաթափման աշխատանքի մեխանիզացիայի, վագոնների պարկի ոգտագործման հսկողության, շոգեմեքենաների վառելիքի ամենախիստ խնայողության համար մղվող պայքարում։

Ոգնել նոր կառուցվող շենքերի ավարտական աեմպերի արագացնելու, շինանյութերի ամենախիստ խնայողության և ճիշտ ոգտագործման, մեխանիզմները լիովին ոգտագործելու, արտասահմանյան նորագույն սարքավորումն ուսումնասիրելու և շինարարության վորակյալ կադրերի նախապատրաստումն ուժեղացնելու համար մղվող պայքարում։

Ոգնել կոլխոզների, սովխոզների, ՄՏ կայանների արտադրական պլանները կատարելու համար, կոլխոզներում աշխատանքը ճիշտ կազմակերպելու, տրակտորը և գյուղատնտեսական մեքենաներն ուսումնասիրելու և նրանց խնամքով վերաբերվելու, նոր ՄՏ կայաններ հիմնելու, տրակտորները և քաշող ուժը ճիշտ ոգտագործելու, վառելու և յուղելու նյութերի խնայողության համար մղվող պայքարում։

ՄԱՆՈՒԿ ՄԱՍՍԱՆԵՐԸ ԴՊՐՈՑԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՈՎ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ ԵՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Պիոներական կազմակերպությունը պետք է իմանա, վոր տիրապետել տեխնիկային՝ նշանակում է մանուկ մասսաների գլուխ կանգնել հանուն պոլիտեխնիզմի, դա նշանակում է բարձրացնել դպրոցի աշխատանքի վորակը, դպրոցի վերակազմության գործին ծառայեցնելով աշակերտական բոլոր ինքնակազմակերպությունների աշխատանքը։

Տիրապետել տեխնիկային՝ դա նշանակում է պայքար մղել պարտուսը յոթնամյակի հիման վրա 31—32 թվին մտցնելու համար բանվորական ռայոններում և կառուցվող նոր շենքերում, համատարած կոլլեկտիվացման և ՄՏ կայանների շրջանում։

Պիոները պոլիտեխնիկական դպրոցի շինարարության հարվածային է։ Մենք առաջարկում ենք բոլոր պիոներներին, բոլոր դպրոցականներին և մանկավարժ-ղեկավարներին հանդես գալ միասնական ֆրոնտով, հանուն դպրոցի աշխատանքի վորակի բարձրացման, դպրոցը պոլիտեխնիկական հիմունքներով արագ վերակազմելու համար։

Պայքարել դպրոցական աշխատանքի վորակի համար՝ դա նշանակում է հաջողեցնել ամենալայն մանուկ մասսաների վերադաստիարակումը կոմունիզմի վոգով, դա նշանակում է պայքար մղել յերեխաների վրա գործադրվող դասակարգայնորեն թշնամի և ոպորտունիստական ազդեցության դեմ։

Պայքարել դպրոցական աշխատանքի վորակի համար՝ դա նշանակում է սերտ կապ հաստատել ուսման և

արտադրողական աշխատանքի միջև, դա նշանակում է բարելավել աշակերտների արտադրական պրակտիկայի վորակը, վորպեսզի ապահովենք ձեռնարկության արտադրական պրոցեսների հետ խսկապես և խորը ծանոթալու գործը. դա նշանակում է ներգրավել բոլոր յերեխաներին գործարանների, ֆաբրիկաների, սովխոզների, ՄՏ կայանների, կոլխոզների արտադրական և հասարակական կյանքի մեջ, կատարելով այն պարտավորությունները, վոր կնքված պայմանագրի հիման վրա վերցրել են դպրոցը և ձեռնարկությունը։

Պայքարել դպրոցական աշխատանքի վորակի համար. դա նշանակում է վերակազմության յենթարկել ուսումնական պլանները կոնկրետ արտադրության հիման վրա, կազմակերպել դպրոցի ուսումնական—արտադրական պլանի լայն քննարկումը, հասցնելով այն ամեն ոչ դպրոցականի և ամեն մի խմբակի, առաջ քաշելով հանդիպական պլանները, վորպեսզի կարողանանք բարելավել դպրոցի ամբողջ մանկավարժական պրոցեսը։

Պայքարել դպրոցական աշխատանքի վորակի համար՝ դա նշանակում է պայքարել պրոլետարական յերեխային դպրոցում պահելու համար, վոչնչացնել յերկրորդ տարի մնալը, դա նշանակում է պայքարել մաղվածքի դեմ, հանուն կոլլեկտիվ փոխոգնության։

Պայքարել դպրոցի աշխատանքի վորակի համար՝ դա նշանակում է կազմակերպել ուսուցչին հասարակական աջակցության ցույց տալու գործը։ Դա նշանակում է բանվորների, կոլխոզնիկների և մասնագետների կողմից մասսայական շարժում ստեղծել դպրոցի պոլիտեխնիզացիայի համար։

Պայքարել դպրոցի աշխատանքի վորակի համար՝ դա նշանակում է մեր ծայրամասերում կազմակերպել

դպրոցի պոլիտեխնիզացիայի գործում պիոներների, դպրոցականների, մանկավարժների և պրոլետարական արդյունաբերական շրջանների բանվորների լայն ոգնությունը։

Պիոներներ և աշակերտներ.

Բանվոր դասակարգը կուսակցության ղեկավարությամբ սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում ցույց տվեց բոլշևիկյան տեմպեր։ Մենք պետք է ցույց տանք նման տեմպեր դպրոցի պոլիտեխնիզացիայի ֆրոնտում, և այդ միջոցով Խորհրդային Միության միլիոնավոր մանուկ մասսաները կտիրապետեն տեխնիկային։

ԴԵՊԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ-ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տեխնիկա-կոնստրուկտորական սիրողության և գյուտարարության զարգացման համար մղվող մասսայական արշավով մենք կարող ենք այնպես անել, վոր նոր միլիոնավոր մանուկները կտիրապետեն տեխնիկային։

Դա պարտավորեցնում է մեզ այնպես անել, վոր տեխնիկական կայանը, խմբակը և լաբորատորիան, ամուր կապվելով արտադրության հետ, ոգնեն յերեխաների տեխնիկական ստեղծագործության զարգացմանը։

Դա պարտավորեցնում է մեզ նեղ տեխնիկական և արհեստանոցներից ու խմբակներից անցնենք աշխատանքի այնպիսի կազմակերպման, վորի հիմքում դրված է գծագրությունը, տեխնոլոգիան, քիմիան, մեխանիկան, եներգետիկան, ազատ թեմաների մոդել-

ներից մեքենաների և դաշտային կազմության նախագծերին անցնելը։

Դա պարտավորեցնում է մեզ փոխել եքսկուրսիոնտուրիստական աշխատանքի բովանդակությունը, լայն ծավալելով արտադրական եքսկուրսիաները, վառելիքի և մյուս հանքերի հետախուզման արշավախմբերը։

Դա պարտավորեցնում է մեզ ընդհարձակել և կազմակերպել տեխնիկական նոր խմբակներ, բանվորական սենյակներ, մանկական տեխնիկական ստեղծագործության թանգարաններ, մանկական տեխնիկական կայաններ և այլն։

ՀԱՆՈՒՆ ԽՍՀՄ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՆՈՒՆ ՏԵԽՆԻԿԱՊԵՍ ԶԻՆՎԱԾ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ

Խորհուրդների յերկրի վրա կախված է պատերազմի սպառնալիքը։ Ամեն մի րոպե մենք պետք է պատրաստ լինենք ջախջախիչ հարված հասցնելու կապիտալիստական աշխարհին։

Մեզի պետք է ամրացնենք յերկրի ինքնապաշտպանունակությունը, ամրացնենք կարմիր բանակի մարտական և տեխնիկական կորովը։

Ռազմաոդային նավատորմիղի շեֆ կոմյերիտմիության ղեկավարությամբ ուսումնասիրենք ոդային տեխնիկան, ամեն մի ջոկատում և ամեն մի դպրոցում զարգացնենք ավիամոդելային և պլաներային գործը, ոգնենք դիրիժաբլա շինարարությանը, հանձնենք ռազմաոդային նավատորմիղին պիոներական ավիաեսկադրիլների նոր ոգակներ։

Մենք պետք է տիրապետենք ռազմա-քիմիական ինքնապաշտպանության գործին, ստեղծելով դպրոցներում ռազմա-քիմիական խմբակներ և կամանդաներ, կապելով քիմիայի դասավանդությունը ռազմաքիմիական գործի հետ։

Մենք պետք է ոգնենք կարմիր բանակի ավտոմոբիլիզացիայի գործին, ծավալելով գարաժներում և ՄՏ կայաններում մանկական ավտո-տրակտորային խմբակներ, ոգնելով միջոցների հանգանակությամբ Կարմիր Բանակի համար 6-անիվային ավտոմոբիլներ ձեռք բերելու նպատակով։

Մենք պետք է ուժեղացնենք մեր ռազմաֆիզկուլտուրային աշխատանքը, վորպեսզի ապագայում տանք յերկրին ֆիզիկապես առողջ և տեխնիկապես զինված մարտիկներ։

Ընկեր բանվորներ, ընկեր կոլտնտեսիկներ.

Ֆաբրիկաների, գործարանների և դաշտերի հարվածայիններ, ձեր գիտելիքները, ձեր փորձառությունը տվեք մեզ՝ բոլշևիկների յերրորդ սերնդին։

Ավելի լայն բաց արեք ֆաբրիկաների և գործարանների դռները մեր դաստիարակության և մեր դպրոցի համար։

Դուք ե՛լ դարձեք հարվածայիններ դպրոցի վերակազմության ֆրոնտում, ոգնեցեք դպրոցը պոլիտեխնիկական դարձնելու։

ԸՆԿԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

Կուսակցության լոզունգը «յերեսներս դեպի տեխնիկան» հրավիրում է մեզ ձեր ոգնությամբ առնել այդ ամրոցը և տալ մեր անտեսությանը պոլիտեխնիկորեն կրթված հազարավոր մարտիկներ։

Մենք կոչ ենք անում ձեզ հարվածային դառնալ կուլտուրական ֆրոնտում և կադրերի նախապատրաստման ֆրոնտում մղվող պայքարում։

Տիրապետեցնք արտադրության և տեխնիկայի գիտելիքներին, և մենք ձեզ հետ միասին կվոչնչացնենք հին դպրոցի մնացորդները։

Խոսքի վարպետներ, մանկական գրքի աշխատավորներ։

Գիրքը մեր ոգնականն է։

Դուք պետք է տաք մեզ այնպիսի գիրք, որը ոգնի մեզ տիրապետելու սոցիալիստական տեխնիկային, ցույց տա սոցշինարարությանը, և Լենինի գործի համար պայքարող տասնյակ միլիոնավոր պատանիներին վառի պայքարի կրակով։

Պատանի պիոներներ, խորհրդային յերկի յերեխաներ։

Բարձրացնենք պրոլետարական յերեխաների ակտիվության նոր ալիքը սոցիալիստական տեխնիկայի և պոլիտեխնիզմի համար մղվող պայքարի շուրջը և պիոներ-կազմակերպության շարքերը ընդունենք բանվորական և կոլխոզային յերեխաներին 100%-ով։

Թող դողան պրոլետարիատի թշնամիները։

Թող սարսափեն Ռամզիններն և մեռնող սպիտակ գվարդիայի ամբողջ վոհմակը։

Մեր կուսակցությունը ուժեղ է և անհաղթելի։

Նրա հետևից գնում են բանվոր դասակարգը, գյուղացիության բազմամիլիոն մասսաները, նրա հետևից գնում են յերիտասարդությունը և յերեխաները։

Պատանի պիոներներ։

«Առաջ՝ հանուն ձեր հարազատ բոլշևիկյան կուսակցության, հանուն նրա Կենտրոնական Կոմիտեյի և դուք կլինեք ամբողջ աշխարհի տերը»։

ՀամԼԿՀԵՄ Կենտկոմի Մանկ. Կոմունիստական կազմակերպությունների Կենտ. Բյուրո։

ՀԱՄԼԿՅԵՄ ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ ՄԿԿ ԱՆԴՐԲՅՈՒՐՈՅԻ 1931 Թ. ՄԱՐՏԻ 22-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

(ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՄԿԿ ԿԵՆՏԲՅՈՒՐՈՅԻ ԴԻՄՈՒՄԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ)

«ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Հատուկ կարևոր նշանակություն տալով ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի ՄԿԿ Կենտբյուրոյի դիմումին՝ տեխնիկային յերեխաների տիրապետելու մասին, իբրև Անդրկոմկասի պիոներ-կազմակերպության ծավալուն ծրագիրը յերեխաների կոմունիստական դաստիարակության համար պոլիտեխնիզմի հիման վրա մղվող պայքարում, ՀամԼԿՀԵՄ Անդրյերկկոմի ՄԿԿ Անդբյուրոն առաջարկում է բոլոր կենտրոնական, մարզային և շրջանային բյուրոներին, ջոկատներին և դպրոցներին։

1. Մշակել դիմումը պիոներների և աշակերտների շրջանային բազային լայն խորհրդակցություններում և կոնֆերենցիաներում բանվորների, ինժեներների, տեխնիկների, ագրոնոմների և կոլխոզնիկների հետ միասին, գործնականապես լծելով ջոկատները և դպրոցները արշավին, որը մղում են յերեխաները տեխնիկային տիրապետելու համար։

2. Կոլխոզային եստաֆետն անցկացնելու, նավթի ստացման գործին մասնակցելու և տրանսպորտը բարելավելու գործում Անդրկոմկասի պիոներ կազմակերպությունների ամբողջ գործունեությունը կապել այն

ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

պայքարի հետ, որը մղում են յերեխաները տեխնիկային տիրապետելու համար։

3. Յերեխաների բոլոր տեխնիկական և գյուղատնտեսական կայանները վերակազմության են յենթարկելու իրենց գործունեությունը, բարելավելով յերեխաների գյուտարարությունը և ռացիոնալիզատորության աշխատանքի վորակը, ամեն մի տեխնիկական կայան դարձնելով մարտական շտաբ, որը գլխավորելու յե տեխնիկան մանուկ մասսաների մեջ առաջ տանելու աշխատանքը։

Ամենորյա ղեկավարությամբ ապահովել մանկական խմբակները, բանվորական սենյակները և արհեստանոցները պիոներ ջոկատներում, դպրոցներում, ծավալելով մասսայական աշխատանքներ տեխնիկայի և գյուտարարության զարգացման ասպարեզում։

4. Հանրապետությունների բոլոր ՄԿԿ կենտբյուրոները ռուսերեն լեզվով յեղած մանկական տեխնիկական գրականությունը հրատարակելու են ազգային լեզուներով, մշակելով մեթոդիկ նամակներ, թերթիկներ, հրահանգներ և պլակատներ տեխնիկայի առանձին հարցի վերաբերյալ։

5. Ստուգել բոլոր դպրոցների և ջոկատների աշխատանքի վերակազմության վորակը՝ պոլիտեխնիկական դպրոցի շինարարությանը գործարանների, ֆաբրիկաների, կոլխոզների, սովխոզների և ՄՏ կայանների կողմից ցույց տրվող մասնակցության և պոլիտեխնիզմի հիման վրա։

6. Առաջարկել հանրապետական բոլոր պիոներ թերթերին և ժուրնալներին թարգմանել դիմումը ազգային լեզուներով և հրապարակել լիովին պիոներ-մանկական մամուլում, ապահովելով կատարման ստուգման հսկողությունը։

Համլկյեմ Անդրյերկկոմի ՄԿԿ
Անդրբյուրոյի նախագահ՝ Իվանով.

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԲՅՈՒՐՈՆԵՐԻՆ

ՆԱՄԱԿ, ԹԵ Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՎՐԱ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐՅՐԱԾ ՇԵՖՈՒԹՅԱՆԸ.

ԳՈԵԼՐՈ-ի պլանի տասնամյակը հավերժացնելու համար և հաշվի առնելով Խորհրդային Միության ելեկտրիֆիկացիայի ընդարձակման անհրաժեշտությունը, Լենինյան կոմյերիտմիությունն ընդունեց ժողովրդական տնտեսության վճռական մասերից մեկի՝ մեր յերկրի ելեկտրիֆիկացիայի շեֆությունը։

Համլկյեմ Կենտկոմը իր վորոշումներով պարտավորեցրեց պիոներական կազմակերպությանը լծվել կոմյերիտմիության աշխատանքին ելեկտրիֆիկացիայի շեֆության գործում։

«Պիոներական կազմակերպությունները պետք է ոգնեն կոմյերիտմիությանը ելեկտրիֆիկացիայի ընդգավառում, զարգացնելով ելեկտրականության սիրողների լայն շարժումը յերեխաների մեջ, մղելով ելեկտրիֆիկացիայի գաղափարների պրոպագանդը, առաջ քաշելով ռացիոնալիզատորական միջոցառումներ և պայքարելով ելեկտրական եներգիայի ամենախիստ խնայողության համար»։ (Համլկյեմ ԿԿ Բյուրոյի վորոշումից)։

Մինչդեռ դպրոցների պիոներական կազմակերպությունների աշխատանքը կոմյերիտմիության ոգ-

նության համար, սոցշինարարության այս հանդուցային մասում պարզապես անբավար է ծավալված:

Պիոներներին և մանուկ մասսաներին սոցշինարարության մեջ էլ ավելի մեծ չափով ներգրավելու խնդիրները, վորոնք նախագծված են ՀամԼԿՅԵՄ IX համագումարի կողմից, պահանջում են ուժերի մոբիլիզացիա՝ հնգամյակի յուրաքանչյուր վճռական տարվա և նրա ղեկավար ողակ՝ էլեքտրիֆիկացիայի հիմնական խնդիրները կատարելու համար:

Էլեքտրիֆիկացիայի վրա կոմյերիտմիության վերցրած շեֆությունը պիոներական կազմակերպության կողմից ցույց տրվելիք ծավալուն մասնակցության անհրաժեշտությունը հատուկ նշանակություն է ստանում այժմ, յերբ յերկրում ծավալվում է վճռական պայքարը հանուն կուսակցության խնդրի իրագործման՝ տեխնիկային տիրապետելու համար, քանի վոր «վերակառուցման ժամանակաշրջանում տեխնիկան վճռում է ամեն ինչ»: (Ստալին):

Այդպիսով՝ էլեքտրիֆիկացիայի աշխատանքին մասնակցելը ամենակարևոր ողակն է հանդիսանալու պայքարի գործում, վոր մղում են պիոներները և աշխատավորների բոլոր յերեխաները տեխնիկային տիրապետելու համար, ծավալելով մասսայական տեխնիկա-կոնստրուկտորական սիրողությունը՝ դպրոցի պոլիտեխնիզացիան ամենաբարձր աստիճանի հասցնելու գործում:

Յելնելով վերոհիշյալ խնդիրներից, պիոներական կազմակերպության և բոլոր յերեխաների աշխատանքը պետք է կառուցված լինի հետևյալ հիմնական մասերի վրա:

1. ԷԼԵՔՏՐՈՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խորհրդային Միության ինդուստրացումը, գյուղատնտեսության վերակառուցումը, ֆաբրիկաների և գործարանների արդիականացման համար մղվող պայքարը, յերեխաների մասնակցությունը ձեռնարկությունների արտադրական աշխատանքին՝ ամենալայն արձագանք գտան մանուկ մասսաներում և ուժեղացրին նրանց ձգտումը տիրապետելու տեխնիկային, սակայն պիոներների և մանուկ մասսաների այդ ձգտումը, տիրապետելու տեխնիկային, դեռ չի գլխավորվել ամեն մի պիոներական ջոկատի կողմից: Յերեխաների՝ գոյություն ունեցող տեխնիկական միավորումների (տեխնիկական խմբակներ, արհեստանոցներ, ՄՏԿ և այլն) աշխատանքի բովանդակությունը բոլորովին չի համապատասխանում այսորվա խնդիրներին, սոցշինարարության ցույց տրվելիք անմիջական մասնակցությանը, յերեխաների մեջ դեռ չկա մասսայական տեխնիկա-կոնստրուքտորական սիրողություն:

Խմբակների մեծ մասը սահմանափակում է իր աշխատանքը դատարկ տեխնիկայով, արհեստագործությամբ, թույլ կազմակերպելով ստացած գիտելիքների և հմտության կիրառումը գործնականում: Մենք պետք է դնենք մասսայական տեխնիկական շարժման խնդիրը, արմատապես վերակազմելով էլեքտրոտեխնիկային տիրապետելու համար սկսված շարժման զարգացման տեխնիկայի ամբողջ աշխատանքը զանազան ձևերով՝ ստեղծելով էլեքտրոխմբակներ, կազմակերպելով ինֆիցիատիվային խմբակներ, բրիգադներ, անցկացնելով եքսկուրսիոն-եքսպեդիցիոն աշխատանքներ, աշխատանքներ սեփական ողակներում և այլն: Էլեքտրոսիրողության զարգացման հիմնական խնդիրն է՝

ոգնել կոմյերիմիությանը էլեքտրիֆիկացիայի վրա վերցրած շեֆության գործում, լուծելով յերկրի էլեքտրիֆիկացիայի հիմնական գործնական հարցերը, ոգնելով առաջին հերթին սեփական շրջանին, Ֆաբրիկային յեվ գործարանին:

Դպրոցական պիոներները աշխատելու յեն, վոր իրենց դպրոցներում դպրոցական ծրագրների մեջ մտցված լինի մեր յերկրի էլեկտրիֆիկացիայի ուսումնասիրությունը: Դպրոցների մանկավարժների հետ միասին ուսումնասիրել գործարանների, Ֆաբրիկաների, սովխոզների, ՄՏ կայանների յեվ կոլխոզների էլեկտրիֆիկացիան Դպրոցներում կազմակերպվող էլեֆտրոտեխնիկական լաբարատորիաները յեվ այլն—այդ բոլորը պետք է ոգնի դպրոցի պոլիտեխնիզացիային, պետք է ապահովի պիոներ-կազմակերպությունների ղեկավար դերը այդ ամբողջ աշխատանքի մեջ:

Էլեքտրականությանը տիրապետելու համար յերեխաների մեջ մասսայական շարժման ծավալումով հարկավոր է ամենից առաջ հասկանալ էլեքտրիֆիկացիայի դերը կառուցվող սոցիալիզմի յերկրում, ծանոթացնելով, թե ինչ նշանակություն է տվել էլեկտրիֆիկացիային Լենինը, բացատրելով նրա դերը արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, սոցիալիստական տնտեսության համար նրա ունեցած նշանակությունը, թե ինչպես կոմյերիմիությունը ընդունել է մեր ժողովրդական տնտեսության կարևորագույն ոլորտի՝ եներգետիկայի, մեր յերկրի էլեկտրիֆիկացիայի շեֆությունը: Հարկավոր է ծանոթացնել յերեխաներին սեփական մարզի և շրջանի էլեքտրիֆիկացիայի պլանին, ծանոթացնել ԳՈԵԼՐՈ-ի պլանին, թե ինչպես և նա կատարվում, թե ինչ դրության մեջ են մեր յերկրի

եներգետիկայի միջոցները: Այդ հարցերի մշակումը պետք է կատարվի եկսկուրսիաների, փորձնական-հետախուզական արշավախմբերի, ցուցահանդեսների և զրույցների միջոցով, կազմակերպելով էլեքտրիֆիկացիայի հարցերին նվիրված կուլտուրական կինոպատկերների մասսայական դիտումը և քննարկումը, կարդալով մատչելի գրականություն:

Էլեֆտրոտեխնիկային տիրապետելը պետք է կազմակերպված լինի սեփական կոնկրետ արտադրության (Ֆաբրիկայի, գործարանի, էլեֆտրակայանի, կոլխոզի, սովխոզի, ՄՏ Կայանի) յեվ տվյալ արդադրության մեջ ստացված գիտելիքները գործադրելու հիման վրա:

Պետք է աշխատել, վոր ամեն մի պիոներ և աշակերտ զինված լինի էլեքտրոտեխնիկայի հիմնական գիտելիքներով, պետք է՝ որինակ, իմանալ, թե ինչպես է ստացվում էլեքտրական եներգիան, ինչպես է հասնում սպառողին (Ֆաբրիկա, գործարան և այլն). պետք է իմանալ, թե տեխնիկապես ինչպես է ոգտագործում էլեքտրական եներգիան տվյալ արտադրության մեջ: Պետք է կարողանալ գործնականորեն մասնակցել ռեմոնտին և մոնտաժի վոչ-բարդ աշխատանքներին, կարողանալ փոխել խցանները, կարողանալ զոդել էլեքտրական թելը, բանեցնել հասարակ մատորները և էլեքտրական մյուս սարքավորումները, իմանալ, թե ինչպես է գործադրվում էլեքտրական-եներգիան, կարողանալ կիրառել այն մեր կենցաղում, կարողանալ կատարել հասարակ մոնտաժ, անցկացնել էլեքտրական թելեր, դնել լամպաներ, շտեպսելներ և այլն: Ստացված գիտելիքները առաջին հերթին պետք է կիրառվեն և ոգտագործվեն տվյալ արտադրության մեջ էլեքտրիֆիկացիային աջակցելու համար: Այստեղ կարող

են տեղի ունենալ մի շարք աշխատանքներ, կապված էլեկտրական սարքավորման ռացիոնալ ոգտագործման հետ։ Հաճախ պատահում է, վոր մի վորևե դազդյահ բանացնելու համար պահանջվում է յերեք ուժ, բայց դրված է շատ ավելի մեծ մատոր, կամ թե հարկավոր է գործնական մասնակցություն էլեկտրասարքավորումը գնելու համար, էլեկտրական հոսանքի կորուստը վոչնչացնելու համար, հին էլեկտրաթելերը նորով փոխարինելու, իզոլյատորները փոխելու և իզոլյացիոն նյութերի վորակը բարցրացնելու համար։

Ցեռեխանների տեխնիկական ստեղծագործության յեվ գյուտարարության ծավալումը հարկավոր է ծառայեցնել ռացիոնալացմանը, կազմակերպելով ռացիոնալիստական միջոցառումներ, բանվորական առաջարկություններ և նրանց իրացումը, ոգնություն ռացիոնալացման բյուրոյին, պայքար էլեկտրական եներգիայի գործածության նոր ձևերի և նրանց զանազան արտադրությունները (էլեկտրական զոդում, տրանսպորտի էլեկտրիֆիկացիա, էլեկտրոքիմիա, պայքար տեղական վարելիքը ոգտագործելու, տեղական տորֆը և քարածուխը ոգտագործելու համար, փոխանակ ներմուծելու։

Մոդելներ պատրաստելու գործում ազատ թեմաներից նախագծերին անցնելը, վորոնք կապված են արտադրության հետ, որինակ՝ հատուկ լամպա շինելը դազդյահը աշխատելու ժամանակ լուսավորելու համար այն պայմանով, վոր կարելի լինի տեղափոխել և ամրացնել դազդյահի զանազան տեղերում, կամ թե պատրաստել մոդելներ փոփոխական հոսանքի մատորների ավելի կատարյալ ձևով։

Մեր էլեկտրաարդյունաբերությունը մինչև այժմ ոգտվում եր արտասահմանյան պղնձով և ալյումինով։

Մեր խնդիրն է ոգտագործել մեր ներքին միջոցները, պայքար մղելով պղնձի և ալյումինի ամենախիստ խնայողության համար։ Այդ պատճառով հարկավոր է անցկացնել այնպիսի միջոցառումներ, ինչպես պղնձի և ալյումինի հավաքը (հին փամփուշտներ, թելեր և այլն) գործարաններում, ֆաբրիկաներում, ժակտեռում, պղնձի տեսակավորումը, պղնձի և ալյումինի մշակման ժամանակ ստացվող փշրանքների համար հատուկ արկղների պատրաստումը։

Էլեկտրոտեխնիկայի տիրապետելը պետք է ծառայի պիոներներին և բոլոր յերեխաների արտադրության աշխատանքների մեջ ներգրավելու գործին, վորը հնարավոր է շատ կատարել միմիայն ինժեներատեխնիկական ուժերի, հարվածային բանվորների և արտադրության ռացիոնալիզատորների ոգնությամբ։

II. ՀԱՆՈՒՆ ԵԼԵԿՏՐՈԵՆԵՐԳԻԱՅԻ ԽԻՍՏ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ

Ցեթե հաշվելու լինենք ձեռնարկություններում, ակումբներում, ժակտերում, փողոցներում և այլն վոչ խնայողաբար, ծախսվող էլեկտրական եներգիան, ապա կորուստների գումարը մի տարում միլիոնավոր ռուբլիներ կկազմի։

Անհրաժեշտ է վճռական պայքար հայտարարել կորուստների դեմ, էլեկտրական եներգիան խնայողաբար ծախսելու յեվ միլիոնավոր ռուբլիներ շինարարության կարիքների համար պահելու նպատակով։

Այստեղ պետք է ծավալված լինի յերեխաների ամենալայն ինքնագործունեությունը։

Վերջերս Մոսկվայի Խորհրդի Նախագահությունը

էլեքտրոէներգիայի ամենախիստ խնայողության նպատակով հրատարակեց հատուկ վորոշում էլեքտրական էներգիայի սպառումը կրճատելու մասին, շենքերի լուսավորության համար հունվարին 20%-ով, իսկ փետրվարին՝ 25%-ով, և այդ նպատակով առաջարկեց առաջին հերթին կրճատել լամպաների վառվելու տևողությունը։ Մինթե այս ասպարեզում պիոներները ոգնություն չպետք է ցույց տան վոչ միայն Մոսկվայի մարզում, այլև ամբողջ Միության մեջ։

Պիոներները պետք է էլեքտրական խմբակներում և էլեքտրո-տեխնիկների բրիգադներում սկսեն էլեքտրական էներգիայի ծախսի ուսումնասիրությունը ձեռնարկություններում, ժակտերում, բանվորական հանրակացարաններում, ակումբներում, դպրոցներում, և պայքար մղեն էլեքտրական էներգիայի խիստ խնայողության համար։ Այդ նպատակով անհրաժեշտ է ջոկատների և ցեխերի պայմանագրերի մեջ լցնել էներգիայի խնայողության վերաբերյալ կետեր։ Կապվելով էներգիայի բջիջների հետ, կազմակերպել հատուկ բրիգադների արշավներ, պայքարելով գործարանների, ֆաբրիկաների, դպրոցների կորուստների դեմ, պարզելով էլեքտրական էներգիայի կորուստների պատճառը (շատ հաճախ պատահում է, որ մի շարք լամպաներ, ժանգավանդ միջանցքներում և սանդուխտների վրա, կարող են կրճատվել, կարող են գտնվել նաև այնպիսի տեղեր, որտեղ հեշտությամբ կարելի է կրճատել լամպաների լույսի ժամերի թիվը, որինակ՝ փողոցների, բակերի, դռների լուսավորությունը և այլն։

Լենինգրադի «Կրասնի պուտիլովեց»-ի պիոներները սկսել են այդ աշխատանքը։

Ցերեխաները յերկու արշավ գործեցին դեպի մեխանիկական և նորոգման ցեխերը։ Ստուգեցին, թե ինչպես է կատարվում վառելիքի խնայողությունը։ Միևնույն ժամանակ տեսան, թե բանվորները ինչպես են խնայում էլեքտրականությունը։ Դաղգյահներից շատերի մոտ բանվորները չեին աշխատում, բայց լամպոչկաներն վառվում եին։ Վառվում եին այն պատճառով, վոր բոլոր բաժանմունքները ունեին մեկ «վիկլյուչատել»։

Պիոներներն առաջարկեցին ադմինիստրացիային սարքել ամեն մի դաղգյահի մոտ մի «վիկլյուչատել»։ Այդ միջոցով էներգիան կարող է խնայվել։ («Լենինսկիյե Իսկրի» լրագրից)։ Ահա թե ինչպես կարելի յե և պետք է պայքարել ձեռնարկություններում էլեքտրական էներգիայի խնայողության համար։

Անհրաժեշտ է հավաքել բանվորների առաջարկությունները էլեքտրական էներգիայի խնայողության վերաբերյալ և, ժամանակելով արտադրական խորհրդակցություններին, հաջողեցնել նրանց կատարումը։ Կազմակերպել էներգիան չարամտորեն վատնողների ցուցադրական դատավորությունները, ոգտագործելով այդ դատավարությունները իբրև մասսայական ագիտացիայի միջոց՝ էներգիան խնայողաբար ծախսելու համար։ Ամեն մի բնակարանում տանը, դպրոցում և ֆաբրիկայում վակցնել գրություններ՝ էներգիայի խնայումը հիշեցնելու համար։ Կազմակերպել հատուկ յերեկոներ, կորուստների դեմ պայքարի ցուցահանդեսներ, կախելով էներգիան չարամտորեն վատնողների հատուկ տախտակները և արկղներ՝ կորուստների դեմ ստացվող առաջարկությունների համար։

III. ԵԼԵՔՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԵԼԵՔՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԻՈՆԵՐՆԵՐԻՆ.

Խորհրդային Միության էլեկտրիֆիկացիայի իրականացման վճռական գործում հանդիսանում են գոյություն ունեցող և նոր կառուցվող էլեկտրակայանները և էլեկտրաարդյունաբերության գործարանները։ Ուստի պետք է ոգնել կուսակցությանը և կոմյերիտմիությանը այդ ձեռնարկությունների վորակական բարելավման համար մղվող պայքարում, նրանց բարելավելու համար, էլեկտրական էներգիայի և սարքավորման պատվերները ժամանակին կատարելու համար արդյունաբերության և գյուղատնտեսության կարիքների համար,—այս բոլորը մարտական ծրագիր է դառնալու պիոներական ջոկատների աշխատանքի համար, վորոնք աշխատում են էլեկտրակայանների և էլեկտրաարդյունաբերության գործարանների պայմաններում։

Պիոներական ջոկատները պետք է կազմակերպեն իրենց ձեռնարկության էլեկտրա-արդիֆիկացիայի ուսումնասիրությունը և պատշաճ ոգնության են ցույց տալու նրա կատարման գործում, ոգնելու են, վոր պլանները հասցվեն ամեն մի բանվորի, ոգտագործելով պիոներական կազմակերպության ամբողջ փորձառությունը, վոր նա ստացել է սոցմրցման և հարվածայնության զարգացման ու ամրացման գործին մասնակցելու ժամանակ։ Ոգնել բրակի և կորուստների դեմ մղվող պայքարին, բարելավելով արտադրանքի վորակը, կազմակերպելով պղնձի և ալյումինի խիստ խնայողություն, ներգրավելով բանվորներին պլանային-ոպերատիվային խմբակների աշխատանքի մեջ,

արտադրական խորհրդակցությունների ռացիոնալացման բյուրոներում։

Էլեկտրաարդյունաբերությանը կադրերով ապահովելու նպատակով, պիոներները պետք է ոգնեն ֆաբզավոդական դասընթացների ամրացման և շինարարության աշխատանքներին, նախապատրաստելով այնտեղ ուղարկելու համար լավագույն պիոներների, վորոնք ակտիվ դրսևորել են իրենց էլեկտրոֆիկացիայի աշխատանքներում, ստեղծելով նրանց նախապատրաստելու համար հատուկ կուրսեր, խմբակներ և այլն։

ԴԵՐԱՆՆԵՐԸ ԵԼԵՔՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԵԼԵՔՏՐՈ-ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԵԼԵՔՏՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵՍՈՒՉՆԵՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԵՋ

Այս խնդիրը իրագործելու համար պիոներական ջոկատները պետք է աշխատեն էլեկտրակայանները և գործարանները էլեկտրիֆիկացիայի մասսայական պրոպագանդի կետեր դարձնելու համար, վորտեղ բանվոր և կոլխոզնիկ մասսաները հիմնովին ծանոթանան էլեկտրիֆիկացիայի դերին՝ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ։ այդ նպատակով կազմակերպել կոնսուլտացիաներ, մատչելի զրույցներ, դասախոսություններ և կազմակերպել ցուցահանդեսներ ձեռնարկության մեջ։ Հարկավոր է հատուկ ուշադրություն նվիրել նոր խոշորագույն շինարարություններին, պիոներների և բոլոր յերեխաների ուշադրությունը դարձնելով շինարարության պլանների ուսումնասիրության և շինարարության խնդիրների ժողովրդականացման վրա, ոգնելով պլանների շուտ իրագործմանը, վերցնելով առանձին առաջադրություններ։

IV. ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՄԵՋ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այդ ամբողջ աշխատանքի հիմնական նշանակությունն այն է, որ ամեն մի պիոների և աշակերտի համար պարզ լինի էլեկտրիֆիկացիայի նշանակությունը մեր յերկրում, և այն միտքը որ պլանային լայն էլեկտրիֆիկացիան հնարավոր է միայն պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ, կառուցվող սոցիալիզմի յերկրում, ուսումնասիրելով մեր յերկրի էլեկտրիֆիկացիայի պլանը և էլեկտրոտեխնիկայի հիմունքները։ Այս բոլորի ցույց տալը էլեկտրիֆիկացիայի գաղափարների ժողովրդականացման աշխատանքի հիմնական խնդիրն է։ Էլեկտրիֆիկացիայի գաղափարների պրոպագանդը մանուկ մասսաների մեջ կարող է կատարվել զանազան տեսակ մասսայական ձևերով, տուրիստական աշխատանքներ տանելով դեպի էլեկտրակայանները, էլեկտրաարդյունաբերության գործարանները և նոր կառուցումները (Դնեպրոստրոյ, Սվիրստրոյ Անգարստրոյ և այլն), կազմակերպելով էլեկտրիֆիկացիայի անկյուններ, խմբակներ, բրիգադներ, ինիցիատիվային խմբակներ, աշխատանքներ ողակների մեջ, կազմակերպել քաղաքային պիոներների ոգնությունը գյուղական պիոներներին՝ այդ աշխատանքը տանելու համար։ Առանձնապես կարևոր է զարգացնել յերեխաների եքսկուրսիոն-տուրիստական աշխատանքը, ծառայեցնելով այն էլեկտրիֆիկացիայի պրոպագանդին, յերեխաների պոլիտեխնիկական հորիզոնի ընդլայնմանը։ Դեպի նոր կառուցումները, էլեկտրակայանները և գործարանները ուղեվորվող եքսկուրսիան և արշավը կհամարվեն հաջողված, յեթե նրանք կդիտեն պիոներներին վոչ միայն այն դեպքում, յեթե կբացատրեն ներկա արտադրության նշանակությունը և տեղը յերկրի էլեկտրիֆիկացիայի գործում, այլ և կդրսևորեն այն արտադրությունները, որտեղ անհրաժեշտ և հնարավոր է պիոներների ոգնությունը։

Կարելի յե կազմակերպել տուրիստական յերկարատև արշավներ մի մարզից դեպի մյուսը, ուշադրություն նվիրել վառելիքի հանքերի (տորֆ, նավթ և այլն) աշխատանքների կազմակերպմանը և ստեղծելով հատուկ բրիգադներ ու խմբակներ արշավի ընթացքում։ Էլեկտրիֆիկացիայի գաղափարների ժողովրդականացումը բանվորների և աշխատավորների մեջ մեծ նշանակություն ունի բանվոր գասակարգի ակտիվության բարձրացման գործում՝ սոցշինարարության վճռական մասերը կատարելու համար։

Աշխատավորների ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկել նոր կառուցվելիք էլեկտրակայանների, գործարանների, էլեկտրաարդյունաբերության նախագծերի և ձեռնարկության էլեկտրական տնտեսության դրության քննության շուրջը՝ էլեկտրոտեխնիկային տիրապետելու համար—ահա այն հիմնական խնդիրները, որոնք պետք է դրված լինեն պիոներների առաջ։

Կարմիր անկյուններում, ակումբներում և բանվորական հանրակացարաններում պետք է կազմակերպել զրույցներ էլեկտրիֆիկացիայի և էլեկտրոտեխնիկայի հարցերի վերաբերյալ, ներգրավելով ինժեներ-տեխնիկական ուժերին, յերիտասարդ մասնագետներին, բանվոր ռացիոնալիզատորներին, ոգնել եքս-

կուրսիաներ, ցուցահանդեսներ՝ էլեքտրիֆիկացիայի պիոներական յերեկոներ կազմակերպելու գործին ակումբներում, հանրակացարաններում, գալրոցներում և այլն։ Ոգնել եներգոբջիջների կազմակերպմանը՝ կոլուստների դեմ պայքարելու և բանվորների տեխնիկական մակարդակը բարձրացնելու համար։

Անհրաժեշտ է կազմակերպել էլեքտրիֆիկացիայի պրոպագանդը կենցաղում և ընտանիքի մեջ, կազմակերպելով էլեքտրիֆիկացիայի անկյուններ, տարածելով մատչելի գրականություն էլեքտրիֆիկացիայի վերաբերյալ, ստեղծելով գրավաճառների բրիգադներ՝ գրականությունը չափահաս մասսաների մեջ տանելու համար։

Պետք է կազմակերպել աշխատանքներ, ներգրավելով բանվորներին տեխնիկական խմբակների մեջ, տեխնիկական յերեկոյան կուրսերի մեջ և այլն։ Պիոներները իրենց աշխատանքներում պետք է աշխատեն, վոր հարվածային բրիգադները գործարաններում և ֆաբրիկաներում մացնեն իրենց պլանների մեջ տեխնիկային տիրապետելու ցուցանիշները։ Պիոներական ջոկատները պետք է ոգնեն իրագործելու կուսակցության «յերեսներս դեպի տեխնիկան» լոզունգը։

V. ՈԳՆԵՆՔ ԳՅՈՒՂԻ ԵԼԵԿՏՐՈՖԻԿԱՑԻԱՅԻՆ

Այստեղ հիմնական ուշադրությունը պետք է նվիրված լինի էլեքտրիֆիկացիայի գաղափարի ժողովրդականացմանը, էլեքտրական եներգիայի կիրառմանը գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորում, բացատրելով տնտեսական շահավետությունը։ Էլեքտրաեներգիայի կիրառումը հերկման, կալսելու,

մելիորացիայի, անասնաբուծության և մանավանդ կաթնատնտեսության մեջ, զանազան գյուղատնտեսության մեքենաների գործդրությունը,—այս ձևերի ագիտացիան չափազանց մեծ նշանակություն է ստանում։

Ուստի պիոներները գյուղում մեծ բացատրական աշխատանքներ են տանելու կոլխոզներում և սովխոզներում էլեքտրիֆիկացիայի աջակցող հատուկ բջիջներ ստեղծելու համար, վորը հնարավորություն կտա կառուցելու կոլլեկտիվ հիմունքներով էլեկտրացանցեր (ոգտագործելով գյուղի մերձակա ռայոնական և ֆաբ-գործարանային էլեքտրակայանների եներգիան), եժանացնելով եներգիան տնտեսության կարիքների համար։ Աջակցության նման բջիջների կազմակերպումը կնպաստի եներգիայի կոլլեկտիվ ոգտագործմանը մի շարք արտադրական պրոցեսների համար (ջաղացների և տեղական գործարանների)։

Այս բոլորը պետք է ոգնի կոնկրետ խնդրի իրագործմանը՝ «գյուղացիական ամեն մի տնտեսության մոտակայում ապահովված է լինելու Իլյիչի լամպուչկայով»։

Վերտեղից գտնել միջոցները։ «Յեթե գնալ կոլխոզնիկի մոտ բացատրելու էլեքտրակայանի նշանակությունը և տնտեսական շահավետությունը, բացատրել, թե վորքան կ'հեշտանա գյուղացու աշխատանքը և այլն, վոր նրա տանը նավթի ճրագի փոխարեն կըլուսավորի լամպուչկան, մի՞թե կարծում եք, վոր այդ կոլխոզնիկը 1—2 ռուբլի չի տա էլեքտրիֆիկացիայի համար։ Անկասկած՝ կտա»։ (Դոսարև)։

Պիոներները այստեղ ևս, ինչպես նաև քաղաքում, պայքար են մղելու, էլեքտրոեներգիան ռացիոնալ ոգ-

տագործելու համար, պայքարելով նրա վոչ-ռացիոնալ ծախսի դեմ։

Էլեքտրիֆիկացիայի մատչելի գրականության, մանավանդ էլեքտրական էներգիան գյուղատնտեսության մեջ գործադրելու հարցի վերաբերյալ, կոլխոզնիկ գյուղացիների մեջ տարածելը պետք է դառնա կարևորագույն խնդիրներից մեկը։ Այս գործում կարող են մեծ ոգնություն ցույց տալ քաղաքի պիոներները և աշակերտները, վորոնք անհրաժեշտ գրականությունը գնելով քաղաքում, ժամանակավորապես յեն իրենց յենթաշեֆային պիոներներին և աշակերտներին՝ գյուղացիների մեջ տարածելու համար։

Քաղաքի պիոներները գյուղական պիոներների հետ միասին լագերներում յեղած ժամանակ ագիտացիա յեն մղելու կոլխոզնիկների մեջ էլեքտրաթելերը և հեռագրաթելերը պաշտպանելու անհրաժեշտության համար։

Գյուղի պիոներները էլեքտրոտեխնիկային տիրապետելու համար աշխատելու յեն նույն ձևով, ինչ ձևով աշխատում են քաղաքում, ստեղծելով պատանի էլեքտրիկների բրիգադներ, էլեքտրական խմբակներ, կազմակերպելով եքսկուրսիոն—տուրիստական արշավներ դեպի մոտակա էլեքտրակայանները, ֆաբրիկանները և էլեքտրաարդյունաբերության գործարանները, ծանոթանալով արդյունաբերության էլեկտրիֆիկացիային, անցկացնելով մասսայական միջոցառումներ դպրոցներում, յերեկոներ, ցուցահանդեսներ և այլն։

Գյուղի պիոներները կարող են մեծ աշխատանք կատարել հետախուզական աշխատանքների բնագավառում, փնտրելով քարածխի և տորֆի էներգետիկական պաշարը, վորը անհրաժեշտ է էլեքտրակայանների

կառուցման ժամանակ։ Պիոներները մեծ աշխատանք են կատարելու նաև՝ ոգնելով կոմյերիտական կազմակերպություններին գյուղատնտեսության համատարած էլեքտրիֆիկացիայի փորձնական շրջաններ ստեղծելու գործում, ընդունելով կոմյերիտական կազմակերպությունների կողմից առանձին առաջադրություններ։ Այդ միջոցառումները առաջ են տանելու գյուղական դպրոցի պոլիտեխնիզացիան։

Մեր յերկրի էլեքտրիֆիկացիայի վրակոմյերիտմիության վերցրած շեֆությանը պիոներների կողմից ցույց տրվող ոգնությունը ստուգելիս և գնահատելիս պետք է յելնել այն բանից, թե վորքան պիոներները և աշակերտները ծանոթացել և հասկացել են էլեքտրիֆիկացիայի, իբրև Խորհրդային Միության ժողովուրդական տնտեսության վերակառուցման ղեկավարողակի, եությունը, թե վորքան այդ աշխատանքը ստեղծել է պիոներների մեջ «բոլշևիկյան բուռն ցանկություն տիրապետելու տեխնիկային» (Ստալին), թե վորքան այդ աշխատանքը խորացրել է ձեռնարկությունների արտադրական ամբողջ պրոցեսի յուրացումը և ներգրավել է արտադրության մեջ պիոներներին և մանուկ մասսաներին։

Մոբիլիզացիայի յենթարկելով պիոներական կազմակերպությունները և աշակերտների ամբողջ մասսան, կոմյերիտմիությանը ոգնելու համար ժողովրդական տնտեսության վճռական մասում՝ յերկրի էլեքտրիֆիկացիայի գործում, մենք կբարձրացնենք և ավելի բարձր աստիճանի վրա կդնենք յերեխաների մասնակցությունը սոցշինարարությանը։

ՀամլկՅԵՄ ԿԿ Մկկ Կենտբյուրոյի
փոխնախագահ՝ Կոտյարով.

Տնտեսական շինարարության բաժնի
ղեկավար՝ Լ. Ռիվին.

ՀԱՄԼԿՅԵՄ ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ ՄԿԿ ԱՆԴՐԲՅՈՒՐՈՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Քաղաքական բացառիկ կարևոր նշանակություն տալով էլեկտրիֆիկացիայի վրա կոմյերիտմիության վերցրած շեֆությանը պիոներական կազմակերպության կողմից ցույց տրվելիք մասնակցության հարցին, ՀամԼԿՅԵՄ ԿԿ ՄԿԿ կենտբյուրոյի առաջ քաշած գործնական խնդիրների հիման վրա, ՀամԼԿՅԵՄ Անդրբյերկոմի ՄԿԿ Անդրբյուրոյի Նախագությունը, յենելով կոմյերիտմիության IX համագումարի վորոշումից, վորտեղ բնորոշված են պիոներական կազմակերպության ակտուալ խնդիրները, աշխատանքի ձևերը և մեթոդները մոտակայում, կոմյերիտմիությանը ցույց տրվելիք օգնության կազմակերպման գործում՝ իրագործելու ՀամԼԿՅԵՄ IX համագումարի դրած խնդիրները յերկրի էլեկտրիֆիկացիայի համար մղվող պայքարի բնագավառում—վորոշում է։

1. Էլեկտրիֆիկացիայի վրա կոմյերիտմիության վերցրած շեֆությանը պիոներական կազմակերպության մասնակցելու մասին ՀամԼԿՅԵՄ կենտկոմի ՄԿԿ կենտբյուրոյի ընդունած նամակը համարել Անդրկովկասի պիոներական կազմակերպության գործնական ծրագիրը՝ էլեկտրասիրողության լայն շարժման զարգացման և էլեկտրոտեխնիկայի բարձունքներին տիրապետելու գաղափարները պիոներների և աշակերտների լայն մասսաների մեջ առաջ քաշելու գործում։

Առաջարկել հանրապետությունների կենտբյուրոներին, մարզային և ռայոնական ՄԿԿ-ներին հասցնել ՀամԼԿՅԵՄ ԿԿ ՄԿԿ կենտբյուրոյի նամակը ամեն մի ջոկատի, դպրոցի, աշխատանքային սենյակի, արհեստանոցի, պատանի տեխնիկների խմբակի և էլեկտրականության սիրողների խմբակի։

2. Հրապարակել ՀամԼԿՅԵՄ ԿԿ ՄԿԿ կենտբյուրոյի նամակը (թերթերում և ժուրնալներում) ամեն մի հանրապետության մեջ մայրենի լեզվով, միաժամանակ մանկական թերթերում և ժուրնալներում կազմակերպել հատուկ բաժիններ, սիստեմատիկորեն լուսաբանելու համար էլեկտրիֆիկացիայի վրա կոմյերիտմիության վերցրած շեֆությունը պիոներների և յերեխաների կողմից ցույց տրվող մասնակցության հարցերը, կազմակերպելով մամուլի միջոցով պարբերական կոնսուլտացիաներ էլեկտրոտեխնիկայի թեորիայի և պրակտիկայի առանձին հարցերի վերաբերյալ։

3. Կազմակերպել նամակի թարգմանությունը չորս լեզվով ՄԿԿ Անդրբյուրոյի և հանրապետությունների կենտբյուրոների գծով բոլոր ջոկատների և դպրոցների համար, այդ նամակի իրացման գործնական ցուցմունքներով, կցելով ՀամԼԿՅԵՄ ԿԿ ՄԿԿ կենտբյուրոյի դիմումը տեխնիկայի մասին։

4. Առաջարկել բոլոր ՄԿԿ բյուրոներին մանկական ու գյուղատնտեսական—տեխնիկական կայաններին ծավալել ջոկատներում և դպրոցներում մասսայական աշխատանք պիոներների և յերեխաների մեջ էլեկտրոֆիկացիայի գաղափարները տարածելու համար, ՀամԼԿՅԵՄ ԿԿ ՄԿԿ կենտբյուրոյի նամակում առաջարկված գործնական միջոցառումների հիման վրա։

Մանկական տեխնիկական և գյուղատնտեսական կայանները պետք է գլխավորեն մանուկ մասսաների շարժման ռազմական ղեկավարությունը էլեքտրիֆիկացիային տիրապետելու համար մղվող պայքարում։ Կազմակերպել նամակի լայն քննարկումը ջոկատներում, դպրոցներում, խմբակներում, աշխատանքային սենյակներում և արհեստանոցներում. անցկացնել էլեկտրականության սիրահար և գյուտարար պատանի տեխնիկների ռայոնական և քաղաքային հատուկ հավաքներ, քննելով ՄԿԿ բյուրոյի նամակը և գործնական պլանը։ Կազմակերպել սոցմրցման լայն ալիք դպրոցների, ջոկատների, խմբակների, արհեստանոցների և աշխատանքային սենյակների միջև էլեկտրականության համար մղվող պայքարում։

5. Ծավալել խմբակների կազմակերպման և էլեքտրոտեխնիկայի ուսումնասիրության աշխատանքը ջոկատներում, դպրոցներում, մանկական տեխնիկական և գյուղատնտեսական կայաններում, աշխատանքային սենյակներում և արհեստանոցներում, ապահովելով նրանց կենդանի գործնական ղեկավարությամբ, սիստեմատիկ կոնսուլտացիայով և ոգնությամբ։

6. Հանրապետությունների ՄԿԿ կենտբյուրոները լուսժողկոմատների հետ միասին մանկական տեխնիկական գյուղատնտեսական կայաններում կազմակերպելու յեն շարժական գրադարաններ ջոկատների և դպրոցների համար, տալով նրանց էլեքտրոտեխնիկայի վերաբերյալ մեթոդիկ և ղեկավար գրականություն, որը մատչելի յե լինելու յերեխաների համար իրենց շարադրությամբ և բովանդակությամբ։ Դրա հետ միասին անցկացնել ընդհանրապես տեխնիկայի վերաբերյալ յեղած գրքերի մասսայական ստուգումը, և

մասնավորապես էլեկտրիֆիկացիայի վերաբերյալ, գրադարաններում, դպրոցներում, բանվորական ակումբներում ընթերցարաններում, կարմիր անկյուններում և այլն, պարզելով թե ի՞նչպես է ոգտագործվում այդ գրականությունը, հարց դնել գրադարանը համապատասխան գրականությամբ լրացնելու մասին։

7. Գրադարաններին, ընթերցարաններին և կարմիր անկյուններին ոգնելու համար կազմակերպել մասսայական աշխատանք տեխնիկայի և էլեկտրիֆիկացիայի վերաբերյալ, գրականությունը մանուկ մասսաների և բանվորների մեջ առաջ տանելու համար։

8. Առաջարկել ՄԿՇ Անդրկովկասյան ՏԱՆ-ը և մասնավորապես տնտեսական բաժնին կազմակերպել մեթոդիկ նամակների և թերթիկների մշակումը էլեքտրոտեխնիկայի վերաբերյալ, դրա հետ միասին ջոկել ռուսերեն լեզվով յեղած էլեքտրոտեխնիկայի սերիայի ամենամատչելի գրականությունը և հրատարակել Անդրկովկասի հանրապետությունների լեզուներով։

9. Կազմակերպել մասսայական աշխատանքներ, ներգրավելով ինժեներների, էլեքտրոտեխնիկների, հարվածային բանվորների և եներգետիկական ինստիտուտների ուսանողների, ղեկավարելու և գործնական ոգնություն ցույց տալու համար մանկական տեխնիկական և գյուղատնտեսական կայանների, արհեստանոցների աշխատանքային սենյակների և խմբակների աշխատանքներին, վորպեսզի յերեխաները տիրապետեն էլեքտրատեխնիկայի թեորիային և պրակտիկային։ Մանկական տեխնիկական և գյուղատնտեսական կայաններում կազմակերպել սեմինարներ ղեկավար աշխատավորներից, վորոնք աշխատանքներ են տանում յերեխաների մեջ (ՄՏԿ և գյուղկ

ՀՀ Ազգային գրադարան
NL0195654

С 32-к
А 407

ների, կաբինետների, արհեստանոցների, աշխատանքային կաբինետների աշխատավորները, խմբակների ղեկավարները և այլն), ելեքտրոտեխնիկայի թեորիայի և պրակտիկայի հարցերը մշակելու համար։

10. Հանձնարարել ռադիոյին, կազմակերպել ռադիոյով ՀամԼԿՅԵՄ ԿԿ ՄԿԿ կենտբյուրոյի միջոցառումների փոխադրությունը, ելեկտրիֆիկացիայի վերաբերյալ։ Դրա հետ միասին փոխադրությունների պլանի մեջ առնել ջոկատների և խմբակների համար ելեքտրոտեխնիկայի վերաբերյալ սիստեմատիկ փոխադրություններ անցկացնելու հարցերը։

11. Առաջարկել հանրապետությունների ՄԿԿ կենտբյուրոներին ապահովել ՀամԼԿՅԵՄ Անդրյերկկոմի ՄԿԿ Անդրբյուրոյի նախագահության որոշման կատարման սիստեմատիկ հսկողությունը և ստուգումը ՀամԼԿՅԵՄ ԿԿ ՄԿԿ կենտբյուրոյի նամակի իրացման վերաբերյալ։

ՀամԼԿՅԵՄ Անդրյերկկոմի ՄԿԿ
Անդրբյուրոյի նախագահ՝ Իվանով.

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР